



### Յ1. ՈՐ ՄԵԿՆ Է ՕՂՈՐԴ

Ժողով-ժամանակով թագավոր մե կ'որոշե մտնա մըջ ժողովուրդ, ուր աչքով տեսնա, ուր շանկըջով լսե՝ մարդիկ իմալ կապրին, շրմքի ըդոր շանկաջնուվի մեկ կըսե՝ «աղեկ կապրին», մեկ կըսե՝ «վատ կապրին» ու թագավոր չը կոնա գլուխ հանե՝ ո՞ր մեկն է օղորդ:

Օր մե դալալ կը կանչե.

— Ժողովուրդ, ձեր աչք լո՛ւս, մեր թագավոր հեր դուս է էկի էրկիր՝ կը ղվոնե՛: Մոտեցեք ուրին, ձեր ցավն ու դարդ պատմե՛ք, ձեր ամեկուդ հոգսն կը հոգա՛, ղցավ կը թեթևցո՛ւ:

Թագավորն է՝ գելնա, կէրթա կը հասնի ուր էրկրի մեկ քաղաք: Քաղքըցիք մեծ-պզտրկով կը թափին մեյդան, տանքըներ, սոխըխներ, հմալ օր ասեղ քցելու տեղ շէղնի, կը տեսնան հանդե թագավորըն՝ սիվտակ ձին հեծուկ, շառչևուց մարդիկ, շետևուց մարդիկ՝ էկավ գընցնա, նա՛ կիշկե, նա՛ բարև, նա՛ ասու բարին:

Ջըհել տղե մե կը հարցու կշտի հալվորին.

— Պա՛պե, թագավորն յորի՞ն է էդ խզեր մարդ էցկի ուր յառչև ու յետև:

Հալվոր կըսե.

— Ո՛րդի, էդ խզեր մարդ է էցկի ուր յառչև ու յետև՝ շրմքի շատ շարութեն ու զալըմութեն է էրի՛ կը վախնա: Օր շար շէղներ ու ղալըմութեն շէներ՝ շըր վա՛խենի, մինակ կը մտնեք մըջ ժողովուրդ, դալալի խոսք լե օղորդ կէղներ:

